

ՀՈՅԳ ՅՈՒԵԼԵԱՆՆԵՐ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

(8-9 սեպտ. 1951)

ՎԱՐԴԱՆԱՅ ԴԻԻՅԱԶՆԱՄԱՐՏԻՆ 1500-ԱՄԵԱԿԸ
ԵՒ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 250-ԱՄԵԱԿԸ

Ահա երկու Յոսելեաններ, աղագային ար-
ժէքներով նուիրականացած պատմական
զոյգ թուականներ, որոնց առջեւ երախ-
տադիրութեան խանդավառ ցոյցերով կը
խոնարհի ամբողջ ազգը:

Հայուն սրբանուէր կրօնքին, անասան
հաւատքին, հզօր սուրին եւ բարձր մշա-
կոյթին տօնն է, որ կը փառաւորուի այս-
օր Մխիթարի յարկին ներքեւ բացառիկ
հանդիսաւորութեամբ. ու ահա իտալիոյ
դանազան քաղաքներէն եւ արտասահմանէն
ժամանած են բազմաթիւ աղագայիններ, ո-
րոնք ամէնքն ալ հոգեկան անխղիւ կա-
պերով իրարու հետ միացած՝ կու գան
խոնարհիլ այն սուրբ դրօշին առջեւ, որ
խորիստ կը ծածանի այսօր Վարդանի եւ
Մխիթարի կրկնակ դէմքերով:

Սեպտ. 8-ին, չաբաթ օր, Մխարանու-
թեան Հաստատութեան դարադարձն է.
ուխտական հանդիսաւոր պատարագը կը
մատուցանէ Արհ. Պետրոս Արք. Քեօի-
ճեան, Տիտղոսաւոր Կողոնիոյ Հայոց: Ս.
Արարողութեան միջոց, խունկի եւ շարա-
կանի քաղցր մեղեդիներուն մէջ, կը կա-
տարուի քահանայական ձեռնադրութիւնը
երկու երիտասարդ սարկաւազներու. ու
այս նուիրական թուականով՝ Մխիթար-

եան Մխարանութիւնը երկու թարմ ոյժեր
եւս կ'ունենայ, յանձին Հ. Յովսէփ Պե-
հեանիլեանի եւ Հ. Ղուկաս Յոկոլեանի:

Աղօթք, խունկ եւ զոհաբերում. ահա՛
ինչ որ 250 տարիներէ ի վեր Մխիթար
Արքայօր շիրմէն կը բարձրանայ. իսկ
այսօր կարծէք այդ բոլորը կը պատկերա-
նայ նորընծայ օծեալներու ամբիւ ճակտին
վրայ, ուր սրբալոյս միւռոնի դրօշմն է
իջեր:

Սեպտ. 9-ին, կէսօրէ վերջ, Մուրատ -
Ռաիայէլեան Վարժարանի Թիէփոլեան
դահլիճին մէջ տեղի կ'ունենայ յորեկինա-
կան դրական հանդէսը: Ներկայ են Արհ.
Պետրոս Արք. Քեօիճեան, Մխարանու-
թեան Ընդհ. Արքայօր, Գերայ. Սրա-
պիոն Վրդ. Ուլուհոճեան, Գերայ. Գրիգոր
Վ. Ինճէեան (Հոռմէն), Մխարանութեանս
Վ.Վ. Հայրերն ու վանքի աշակերտները,
Հոռմի Ք. Լ. Վարժարանի տեսչութիւնն
ու աշակերտութիւնը, ներկայացուցիչներ
«Մասիս»ի եւ «Յառաջ»ի կողմէ, բազմա-
թիւ աղագայիններ:

Հանդէսը կը բացուի «Բամ, փորո-
տան»ով, զոր ներդաշնակ եւ ոգեշունչ
չէլտով կ'երգեն վանքի աշակերտները:
Բացման խօսքը կը կատարէ Ուխտիս Ընդհ.

Արքայօր, Գերայ. Սրապիոն Վրդ. Ու-
լուհոճեան, ու պանծացնելով Մխիթար-
լուհոճեան, ու պանծացնելով Մխիթար-
եան Մխարանութեան 250-ամեակը, կը
պարզէ Մխիթարի եւ Մխիթարեան զոր-
ծունէութեան ազդանուէր դրօշմը՝ բարո-
յական, դիտական ու մշակութային մար-
դերուն մէջ, վեր հանելով անոնց ցայտուն
նուաճումները:

Ապա կը բանախօսէ Հ. Սահակ Վրդ.
Տէր Մովսէսեան, Տեսուչ Սեւրի Մուրատ-
եան Վարժարանին. հայրենաշունչ կորո-
վով կ'ողբկոչէ Վարդանանց դիւցազնա-
մարտին 1500-ամեակը, ցոյց տալով այդ
հերոսներուն իսկական նպատակն ու քա-
ղաքականութիւնը, ինչպէս նաեւ Յազկեր-
տի եւ Վասակի անդրիացած տիպարները
ընդգծելով: «Աւարայրի ճակատամարտով
կ'ըսէ ան - մեր պատմութիւնը ողի ու
թիւ մեծ ցեղերու՝ թէ իրենք ազգովին կը
մաքառէին ի սէր կրօնքի եւ հայրենիքի,
մինչ անոնք տակաւին անտառներու խա-
ւարին մէջ կը խարխալէին»: Աւարտելով
իր խօսքը՝ կը յարէ. «Աւարայրի ճակա-
տամարտը՝ հայութեան մեծագոյն պար-
ծանքն է, խորհրդանշելով հայ ժողովուրդի
կամքին ու կորովի տոկոսնութեան: Ան կը
ներշնչէ մեզի սէր, միութիւն եւ վերա-
դարձ դէպի ճշմարիտ քրիստոնէութեան
լուսաշող սկզբունքները»:

Երկրորդ բանախօսն էր Հ. Մեսրոպ Վ.
Ճանաչեան, խմբագիր «Բազմավէպ»ի, որ
բեմ կը բարձրանար հանդէսի երկրորդ
մասին մէջ: Նիւթ առնելով Մխիթարեան
Մխարանութեան 250-ամեակը, բանա-
ստեղծական թռիչքով եւ պատմական ան-
ուրանալի հաւաստումներով՝ ան կը դժ

Մխիթարեան անդուլ զործունէութիւնը
մշակութային ճամբով, եւ կը պանծացնէ
այն իմացական աշխարհը՝ որ հայութեան
մէջ կերտուեցաւ Մխիթարեաններու ժիր
եւ անձնանուէր ջանքերով:

Փակման խօսքը կը կատարէ Արհ. Քե-
օիճեան, որ զուգելով Պետրոս Արք. Քեօիճեան, որ
երկու մեծ յորեկաններու յիշատակը, կը
չէլտէ այն պարտադրանքը, որ մեր վրայ
կ'ընէ այս առիթն. այն է հետեւիլ լու-
սաշող ճամբուն, ուրկէ դացին Վարդա-
նանք, եւ որուն կը հրաւիրէ մեզ Մխիթարի
Տունը. պահել մեր ազգային դիմադիրը,
մաքուր եւ սուրբ քրիստոնէական համե-
րաշխ ապրումով, եւ դայն իբրեւ աւանդ-
յանք յաջորդ սերունդներուն, որոնց
վկայ պիտի ըլլան անոնք, որ պիտի տես-
նեն Մխիթարեան Ուխտիս 300-ամեակը:

Գեղարուեստական բաժնին մէջ, հան-
դէսի թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ մասն-
րուն, կը փայլին շնորհալի երկու քոյրեր,
Օր. Արնէս եւ Օր. Եղիա Միլտոնեաններ,
որոնք դաշնակով ու թաւնութակով ճար-
տարօրէն կը նուազեն Պախ-Պուզոնի
«Fantasia cromatica» (դաշնակ), Սէն -
Սաէնսի «Կարապը» (թաւնութակ եւ դաշ-
նակ): Ապա Սամարղինի «Sonata» (թաւնութակ ու դաշնակ) եւ Արամ Սա-
(թաւնութակ «Toccata» (դաշնակ):

Հանդէսի միջոց վանքի աշակերտներէն
մէկը կ'արտասանէ դրարար հատուած մը
Ներշնչէն, Վարդանանց դաւանանքը:

Այսպէս խանդավառ ու հայրենասիրա-
կան ջերմ մթնոլորտի մէջ կը փակուի աղ-
գային հանդէսը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

